



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 21 >> 09 2018թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 27-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԺԻ ԱՌԹՎՎ

Հարգելի հայրենակիցներ.

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության Անկախության 27-րդ տարեդարձի առթիվ:

Մենք աշխարհին ապացուցեցինք, որ արժանի ենք ազատ ապրելու և ինքնուրույն կերտելու մեր երկրի ապագան: Նոր Հայաստանում հայ ժողովուրդն իր միասնականությամբ ողջ աշխարհին ցույց տվեց, որ համախմբված է ու պայքարելու է երկրի շենացման ու զարգացման համար:

Համոզված եմ, որ հավատն ու վստահությունն անկախ պետականության ապագայի նկատմամբ մեզ չեն լքի երբեք, և մենք միասնական ջանքերով էլ ավելի կշենացնենք մեր երկիրը՝ սերունդներին հզոր, անկախ, զարգացած Հայաստանը ժառանգություն թողնելով:

Անկախության ճանապարհը դյուրին չեղավ մեր ժողովրդի համար: Շատ հայորդիներ նահատակվեցին հանուն ազատության ու անկախության վեհ գաղափարի: Մենք չպետք է մոռանանք մեր լավագույն զավակներին, որոնք այդ սուրբ պայքարին նվիրաբերեցին իրենց կյանքը:

Միրելի շիրակցիներ, այս տոնական օրը բոլորիս ցանկանում եմ միասնականություն, անկոտրում կամք և վճռականություն՝ հանուն անկախ Հայաստանի ապագայի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Կ.ՍԱՐՈՒԽՄԱՆՅԱՆ